

### Կրթութիւն Յանուն Յայ Երեխայի Բարօրութեան

Posted By [Asbarez Staff](#) On January 25, 2012 @ 4:30 pm In [Գաղութի Կեանքէն](#), [Յարգազող](#), [Սփիւնք](#) | [No Comments](#)

#### ՆԱՆԷ ԱԲԱԳԵԱՆ

«Յայկ» նախագիծը (Haik Project.org) կրթական ծրագիր է, որ գործում է «Յայ Երեխայի բարօրութեան» հիմնադրամի շրջանակներում 2005 թուականից: Այն իր տեսակով բացառիկ ծրագիր է, որի նպատակն է



ծնողներին կրթել մի քանի առանցքային հարցերի շուրջ, հիմնականում՝ ծննդաբերութեան, յետծննդաբերական շրջանի եւ տրամադրի խնամքի հետ կապուած, ինչպէս նաեւ թլփատման հարցերով:

Բժշկական մարդաբան Աստղիկ Վարդանեանն ու ամուսինը՝ մասնագիտութեամբ մանկական հոգեբոյժ Արթուր Պօղոսեան, այս թեմաների մասին հայ համայնքի շրջանում իրազեկութեան բարձրացումը համարում են առաքելութիւն եւ մի քանի տարի է, իրենց նախագծի շրջանակներում՝ սեմինարների, հեռուստահաղորդումների, յօդուածների, անհատական այցերի ու հանդիպումների միջոցով հայ ծնողներին են փոխանցում կենսական նշանակութիւն ունեցող տեղեկատուութիւն:

[1]

«Որպէս երեք տղաների մայր եւ բժշկական մարդաբան, ուսումնասիրել եմ երեխաների եւ մայրերի առողջութեանն առնչուող բազմաթիւ թեմաներ: Արդիւնքում, առանձնացրել եմ յատկապէս մի քանի խնդիրներ, որոնք կարող են անդամնալի ազդեցութիւն ունենալ մօր եւ երեխայի առողջութեան համար եւ իւրաքանչիւր ծնող պետք է տեղեկ լինի այդ հիմնահարցերից: Սա էր, որ շարժիչ ուժ հանդիսացաւ իմ եւ ամուսնոյս համար՝ ստեղծելու «Յայկ» նախագիծը եւ փորձելու առաւելագոյնս օգտակար լինել հայ մայրերին ու մանուկներին», պատմում է Աստղիկ Վարդանեանը:

Թլփատման դէմ ակտիւ շարժման արդիւնքում, Միացեալ Նահանգներում 1979 թուականից այդ երեւոյթը նուազել է 85 տոկոսից, հասնելով՝ 65ի՝ 2005 թուականին: Միջոցառում, յոյժ ժամանակահատուածում, ամերիկահայերի շրջանում թլփատման դեպքերն աճել են՝ հասնելով 70 տոկոսի: Բժշկական մարդաբան,



[2]

մագիստրոս Աստղիկ Վարդանեանը հայ համայնքում այս միտումը համարում է բացասական՝ հիմնաւորելով տեսակէտն իր գիտական ուսումնասիրութեամբ, որտեղ ներկայացնում է թլփատման հետ կապուած խնդիրներն ու հնարաւոր բացասական հետեւանքները: «Թլփատումն անվսաս վիրահատութիւն չէ, ինչպէս փորձում են հաւատացնել դրա կողմնակիցները: Այն լուրջ վիրաբուժական գործողութիւն է յատկապէս տրամադրի երեխայի համար, որ հիմնականում տեղի է ունենում առանց ցաւազրկման: Ցաւը մանուկներից շատերի մէջ համարեա նեարդային կարճատեւ կոմա (neurogenic shock, coma) է առաջացնում», նշում է Աստղիկ Վարդանեանն ու աւելացնում, որ թլփատման արդիւնքում, երեխան կարող է դժուարամիզութիւն, արեան վարակում եւ արիւնահոսութիւն ունենալ: Նա կոչ է անում բոլոր հայ մայրերին, մինչ իրենց տրամադրի նման փորձութեան ենթարկելը՝ մանրամասն ուսումնասիրել այդ երեւոյթը՝ օգտուելով մասնագիտական խորհրդատուութիւնից, համացանցում առկայ մեծաքանակ տեղեկատուութիւնից:

Ստորեւ ներկայացնում ենք թլփատման եւ ծննդաբերութեան հետ կապուած խնդիրների շուրջ Աստղիկ Վարդանեանի հետ զրոյցից գրառումներ.

#### ԹԼՓՍՈՒՄ

Կը ցանկանայի սկզբում ներկայացնել, թէ ի՞նչ է թլփատումը՝ փաստերով հակադարձելով ընդունուած այն կարծրատիպին, թէ թլփատումը դրական երեւոյթ է: Թլփատումը առնանդամի ծայրամաշկը (թլփիը) հեռացնելու վիրահատութիւնն է: Այն հիմնականում իրականացում է երեխայի ծնունելու յաջորդ օրը եւ յոյ է հնարաւոր անկանխատեսելի հետեւանքներով. երեխան կարող է դժուարամիզութիւն, արեան վարակում եւ արիւնահոսութիւն ունենալ: Մարդիկ կարծում են, թէ թլփատման ժամանակ ընդամենը մի քանի միլիմետր մաշկ է հեռացում, սակայն հեռացում է բաւական մեծ քանակութեամբ հիւսուածք: Մաշկի այդ մասի վրայ մասնագիտացուած, մօտ 10-20 հազար նեարդային վերջոյթներ կան եւ որոշ հետազօտութիւնների արդիւնքում պարզուել է, որ սեռական օրգանի վրայ ամենազգայուն հինգ կետերը գտնուում են հենց թլփի վրայ: Թլփատման արդիւնքում, փաստօրէն, երեխան կորցնում է նեարդային բազմաթիւ հանգոյցներով զգայուն մի համակարգ, որը յետագայում մեծ դեր է խաղալու նրա սեռական զգայունակութեան պահպանման հարցում: Բացի այդ, հեռացում է մեխանիկական պաշտպանական ֆունկցիա (պաշտօն-խմբ.) ունեցող մաշկ: Թլփին ունի նաեւ իմունոլոգիական (պաշտպանական-խմբ.)



[3]

նշանակութիւն. այն ստեղծում է հակավիրուսային (հակավարակային-խմբ.) եւ հակաբակտերիալ առողջ միջավայր: Թլփատման աջակիցները նշում են, որ այն նպատակայարմար է առողջութեան եւ հիգիենայի (մաքրութեան-խմբ.) տեսանկիւնից, քանզի իբր՝ թլփի ներքոյ սմեգմա կոչուող արտադրուկը կարող է քաղցկեղածին լինել եւ ոչ հիգիենիկ: Սակայն այս վարկածն էլ անտրամաբանական է, քանզի առողջ ֆունկցիոնալ օրգանի հեռացումը հիւանդութիւն կանխարգելելու նպատակով ինքնին անմտութիւն է: Իսկ մաքրութեան առումով՝ պետք է ընդամենը հետեւել անհատական հիգիենայի պարզ կանոններին: Թլփատման վնասների եւ դրա արդիւնքում հաւանական բարդութիւնների անդրադարձել են համաշխարհային բազմաթիւ բժշկական խոշոր եւ հեղինակաւոր կազմակերպութիւններ ու միութիւններ,

ինչպէս՝ Ամերիկեան մանկաբուժական ակադեմիան, Ամերիկեան բժշկական ասոցիացիան, գանադական ու աստրալիական համաձուլ կազմակերպութիւններ: Այս հաստատութիւնները թլփատումը չեն դասում հիւանդութիւնների կանխարգելման շարքին: Բրիտանական բժշկական ասոցիացիան իր հերթին յայտարարել է, որ «ծնողների նախասիրութիւնը բաւարար չէ երեխաներին վիրաբուժական գործողութեան ենթարկելու»:

Եւրոպայում, Աստրալիայում, Ասիական մի շարք երկրներում մանուկների թլփատումն վաղուց կասեցուած է, մինչ Միացեալ Նահանգներում երեւոյթը շարունակում է, ինչը պատմական արմատներ ունի:

**ԹԼՓԱՏՄԱՆ ՀԻՄՔՈՒՄ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՄԱՆԴՅՅՈՒՆ Է**

Թլփատումը մահմեդական եւ հրեական կրօններում պատմականօրէն առանցքային տեղ է ունեցել. ազգային, էթնիկ, մշակութային եւ կրօնական պատկանելիութիւնը յաճախ պայմանաւորուած է եղել թլփատում լինելու հանգամանքով: Հաւատացեալ հրեաները ծիսական թլփատում կատարում էին ութ օրական ևորածիններին: Ծուրջ վեց դար Եւրոպայում թլփատումը եղել է այն պատնէշը, որ բաժանել է հրեաներին քրիստոնէայ աշխարհից, քանզի քրիստոնէաները վախ են ունեցել թլփատման ծեսից եւ այդ երեւոյթը Նոյնիսկ առասպելացուել է բացասական առումով, թէ հրեան ի՞նչ կարող է անել իր երեխայի հետ: Ուղղափառ հրեաները, իսկապէս, այդ ծեսը արիւնայի ձեւով են անցկացնում. թլփատողը՝ մոհելը, կտրում է թլփիը եւ այդ արիւնը ծծում ու թքում է գիւտ մէջ եւ տալիս այն ներկաներին խմելու:

Չիզմունդ Ֆրոյդն է Նոյնիսկ անդրադարձել այս հարցին՝ նշելով, որ հակասեմիտականութեան հիմքում ընկած է թլփատման հարցը: Քրիստոնէայ եւ հրեայ հոգեւոր գործիչներն էլ բազմիցս բանավիճել են այս հարցով: Հին Կտակարանում թլփատումը համարուել է որպէս «դաշինք» Աբրահամի եւ Աստծու միջեւ, մինչդեռ Նոր Կտակարանում Պողոս առաքեալն ասում է, որ քրիստոնէութիւնը վեր է մարմնական բոլոր ծեսերից եւ որեւէ զոհաբերութիւն անիմաստ է: Թւում է, թէ ներկայում կրօնի ազդեցութիւնը թուլացել է,

սակայն այդպէս չէ: Բժշկական պատմագրութեան համաձայն, Ամերիկայում թլփատման տարածումը մեծ թափով սկսուել է հասարակայնացուել յատկապէս հրեայ բժիշկների կողմից, եւ տարբեր



[4]

Ժամանակաշրջաններում այդ երեւոյթն իրականացնելու համար տարբեր հիմնաւորումներ են ներկայացուել: Թլփատումը, իւրաքանչիւր ժամանակաշրջանում յայտարարուում է, որպէս տուեալ պահին անբուժելի հիւանդութիւնների կանխարգելման լաւագոյն միջոց: Բժշկական վերջին, (ոչ վստահելի) ուսումնասիրութիւններն էլ՝ կատարուած իբր Աֆրիկեան երկրներում, վկայում էին, որ թլփատումը կանխարգելում է ԶԻԱՅ (AIDS) հիւանդութիւնը: Սրանք չափազանց վտանգաւոր եւ անբարոյական մօտեցումներ են, որովհետեւ Աֆրիկայում ԶԻԱՅը տարածուում է բոլորովին այլ պատճառներով: Չուզահեռաբար, թլփատման ամենայաճախ հանդիպող արդարացումը՝ հիգիենան է:

Հարկ եմ համարում անդրադառնալ նաեւ թլփատման մէկ այլ՝ ֆինանսական կողմին: Մօտաւորապէս տասը ըրպէ տեւող վիրաբուժական այս գործողութիւնը բաւական թանկ՝ 400-800 դոլար արժեցող վիրահատութիւն է՝ շահաւետ թե՛ բժշկի եւ թե՛ հիւանդանոցի համար:

**ԹԼՓԱՏՈՒՄԸ ԱՐԵՐՆԵՐ ՉՈՒՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ**

Թլփատումը քրիստոնեայ հայերի շրջանում երբեւէ ընդունուած չի եղել եւ նոյնիսկ Նոր կտակարանն է մերժում մարմնական որեւէ գոհաբերութիւն: Այստեղ նոյնիսկ հակասութիւն է առաջանում քրիստոնեական մկրտութեան եւ անդամահատման միջեւ:

Հայերը, դարերով, նոյնիսկ երբ շրջապատուած են եղել մահմեդական հարեւաններով՝ մշտապէս պայքարել են մահմեդականացուելու դէմ, ինչի գլխաւոր մարմնական դրոշմն էր համարում թլփատումը: Կան բազմաթիւ փաստեր նաեւ Հայոց Տեղասպանութեան ժամանակ թլփատման դէմ հայերի պայքարի մասին: Միւսընդեմ այժմ, երբ չկան ճշումներ եւ օրէնքներ, հայերն ինքնակամ են դիմում այդ գործողութեանը, այն դէպքում, երբ թլփատումը երբեւէ մեր կրօնի եւ մշակոյթի մաս չի կազմել: Թլփատումը, սակայն չպետք է քննարկուի զուտ կրօնական, ազգային տեսանկիւնից՝ այն դրանցից վեր է: Երեխայի մարմնական ամբողջականութիւնը մարդու հիմնարար իրաւունքի հարցն է:

Ցաւօք, մեր հայ հանրութիւնը դեռ պատրաստ չէ այս թեմայի շուրջ բաց եւ ազատ քննարկման: Հայ ծնողները չեն ցանկանում խօսել այս մասին՝ խուսափում են, կա՛մ սկսում են պաշտպանուել ու արդարանալ, երբեմն էլ նկատուում է ազրեսիութիւն: Սակայն, անհրաժեշտ է կամք կիրառել եւ կրթուել, քանզի շատ յաճախ բժիշկներն էլ խեղաթիւրուած են ներկայացնում պատկերը: Սակայն, անհրաժեշտ է մի կողմ թողնել նախապաշարումները եւ պատրաստ լինել ակտիւօրէն ներգրաւուելու հասարակական քննարկման՝ յանուն մեր երեխաների պաշտպանութեանը:

**ՎԵՐԱԴԱՐՁԷ ԲՆԱԿԱՆ ԿՆՆԱՐԿԵՐՈՒԹԵԱՆԸ**

«Հայկ» նախագիծը (Haikproject.org) մայրերին դիմում է նաեւ այսպիսի կոչով: Հիւանդանոցներում ծննդաբերութիւնը խիստ յազեցած է տեխնիկական գերծախսատար միջամտութիւններով: Դրանք, ինչպէս թլփատումը, խրախուսուում են հիւանդանոցներում եւ բժշկական հաստատութիւններում, որովհետեւ իւրաքանչիւր միջամտութեան ու գործողութեան համար պետական ու մասնաւոր ապահովագրութիւններից գումար է ստացւում:

Պտղի սրտի էլեկտրոնային մոնիտորինգը, մեջքի վրայ պառկած ծննդաբերելը եւ բազմաթիւ այլ միջամտութիւններ սահմանափակում են կնոջ շարժունակութիւնը, ուժ տալու կարողութիւնը, խանգարում մօր եւ երեխայի արեան շրջանառութեանն ու սրտի աշխատանքին: Այս իրավիճակում միակ ցուցումը լինում է կեսարեան հատումը: ԱՄՆում բոլոր ծնունդների 30 տոկոսը կեսարեան հատումով է կատարուում: Բժշկական տուեալների համաձայն՝ կեսարեան հատումների հետեւանքով մայրական մահացութիւնը 8-12 անգամ ավելի բարձր է յատկապէս կրկնակի կեսարեանների ժամանակ: Միաժամանակ, բնական ծննդաբերութիւնը դարձել է այլընտրանքային եւ քիչ թուով մարդկանց կողմից է ընդունուում: Մէկ այլ կարեւոր հարց է երեխային կրծքով կերակրումը, որ կարող է 50 տոկոսով նուազեցնել հնարաւոր հիւանդութիւնների հաւանականութիւնը:

Բազմաթիւ հիւանդութիւններ բուժելու համար ծախսուող գումարների փոխարէն, կարելի է կանխարգելիչ-կրթական սեմինարներ անցկացնել: Իւրաքանչիւր մայր պետք է տեղեակ լինի պարտադիր փաստերից մինչ երեխայի ծնուելը:

Վերոնշեալ եւ այլ հարցերի շուրջ «Հայկ» նախագիծը իւրաքանչիւր ամսուայ վերջին Չորեքշաբթին

անցկացնում է սեմինար-քննարկում՝ հայ համայնքի ծնողների համար:

Յ.Գ. «Հայկ» նախագծի շրջանակներում անցկացուող հերթական սեմինարը տեղի ունեցավ Յունուարի 25ին: Ձեռնարկի ընթացքում խօսակները՝ Աստղիկ Վարդանեսանը, հոգեբան Լիզա Մանուելեանն ու մանկական հոգեբույժ Արթուր Պողոսեան, խօսեցին ծննդաբերության, երեխային կրծքով կերակրելու, թվատման եւ մի շարք այլ թեմաների մասին: Նրանք կոչով դիմում են հայ ծնողներին, եկեղեցուն, համայնքի բժշկական կառույցներին՝ միասնական լինելու հայ երեխայի առողջությանն առնչուող հարցերում եւ համատեղ պայքարելու վնասակար սովորոյթների դէմ:

---

Article printed from Asbarez News - Armenian Edition: <http://asbarez.com/arm>

URL to article: <http://asbarez.com/arm/121136/>

Copyright © 2010 Asbarez Armenian News - Armenian. All rights reserved.